Բայց ես համոզուած էի, որ նախահարց մոռացուած շիրիմները եւ հայրական ամրոցի տխուր փլատակները այնքան ցաւ չէին կարող ազդել նրա զգայուն սրտին, որքան վերջին գիւղացու խարխուլ խրճիթի թշուառութիւնը, որ տառապեալ մայրը, սովատանջ երեխաների լացն ու տրտունջը հանգստացնելու համար միայն պարզ ջրով լցրած պտոյկը դնում է օջախի վրայ, շերեփով խառնում է, որպէս թէ կերակուր է պատրաստում երեխաների համար:

Ա՛խ, որքան երկար էր այդ գիշերը: Տէր հայրը դեռ չէր վերջացրել իր «եկեսցեն». նրա շրթունքները դեռ լուռ շշնջում էին: Երբ պիտի քնէր նա: Այնտեղ պլպլում էր մի այլ անքուն արարած՝ ճրագը: Ես պատրաստ էի մի շունչի հարուածով սպանել նրան: Թո՛ղ մութ լինէր, թո՛ղ ամէն ինչ ծածկուէր խաւարի մէջ: Ես կը վերկենայի, կը հագնուէի ու կգնայի... Ի՞նչ կը մտածէին տանեցիք, եթէ նկատէին: Ինչ կուզէ թո՛ղ մտածէին, բայց ես կգնայի... Գուցէ կը մոլորուէի, կը կորչէի խրճիթների լաբիրինթոսի մէջ, գուցէ գայլանման շները պատառ-պատառ կանէին ինձ, բայց կգնայի... Կը գնայի դէպի դպրոցը եւ նրան կից երկու սենեակները...

Գոնէ շուտ լուսանար: Տէր հօր աղօթքի շշունջը այլեւս չէր լսւում. նա քնեց: Խրճիթում արթուն ոչ ոք չմնաց: Ես ուրախացայ: Պէտք էր միայն ճրագը հանգցնել: Բայց ահա աքաղաղը սկսեց կանչել: Նրա ձայնից զարթեց օրօրոցի մէջ քնած մանուկը եւ զարթեցրեց քնած մօրը: Մի հսկող եւս աւելացաւ: Ի՞նչ պէտք էր արած: Մայրը ծիծը դրեց երեխայի բերանը եւ, գլուխը դնելով օրօրոցի դաստակի վրայ, նստած տեղում դարձեալ քնեց: Այդ լաւ եղաւ: Ամբողջ օրը աշխատած գեղջկուհու անդամները կարօտ էին հանգստութեան: Բայց երեխան այդ չգիտէր: Նա կրկին սկսեց լաց լինել, կրկին զարթեցրեց մօրը: Երեւի, ծիծը դուրս պրծաւ նրա բերանից: Ես պատրաստ էի խեղդել նրան, որ ձայնը կտրէ: Մայրը դարձեալ ծիծը դրեց բերանը, դարձեալ գլուխը դրեց օրօրոցի դաստակի վրայ, իսկոյն քունը տարաւ: Այդ ուրախացրեց ինձ: Բայց ահա մի նոր անյաջողութիւն: Կրկին լսելի եղաւ շղթայի շաչիւնը: Այս անգամ ձին ձիգ տոեց շղթան: Երեւի նա շարժեց ոտները: Տէրը զարթեց, գլուխը վեր բարձրացրեց եւ ականջները լարեց դէպի ախոռատան պատը: Ոչինչ չկար, ձին հանդարտուեց: Տէրը կրկին գլուխը դրեց բարձի վրայ: Ի՜նչ երջանիկ մարդիկ են դրանք, գոնէ կարող են քնել, քնե՛լ, որ մարդու գլխաւոր մխիթարութիւններից մէկն է: Ինձ համար չէր այդ մխիթարութիւնը: Գոնէ շուտ լուսանար: Մտածեցի զբաղեցնել ինձ, որ ժամանակը անցնի: Տասն անգամ համբարեցի առաստաղի գերանները, տասն անգամ համբարեցի գերանների վրայ շարած փարդուկները: Այդ եւս, վերջապէս,